ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 Նոյեմբերի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

161
(3192)

100 դրամ

Ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՕՐՈՔ ՄՄԽՎԵԼ COVID-Ի ՓՈՂԵՐԸ. ԿՈՌՈՒՊՑԻԱ, ՄԱՍ 6

Արսեն Թորոսյանը, ով այժմ ղեկավարում է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության ստուգումների՝ առողջապահության նախարար եղած ժամանակ իրականացրել է մի շարք խայտառակ եւ անթույլատրելի գործողություններ: Ստուգման տվյալներով՝ COVID-19-ի բուժումը մի հիվանդանոցում արժեցել է 722 հազար դրամ, իսկ մեկ այլ բուժհաստատությունում՝ 109 հազար դրամ, ինչը ցույց է տալիս ծախսերի զգալի տարբերություն:

«Ժողովուրդ» օրաթերթը նախորդ հրապարակումներում արդեն անդրադարձել էր այն չարաշահումներին, որոնք, ըստ ֆինանսների նախարարության տվյալների, թույլ են տրվել Արսեն Թորոսյանի ղեկավարած նախարարությունում: Հիշեցնենք, որ COVID-19-ի ժամանակահատվածում Արտյոմ Սմբատյանի մասով ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվում էր քրեական վարույթ: Նշենք նաեւ, որ այս պաշտոնյան այժմ կրկին աշխատում է Արսեն Թորոսյանի ենթակայության ներքո. նա նշանակվել է Միասնական սոցիալական ծառայության պետ:

Այդ օրերին Երեւանի կարանտինային վայրերի պատասխանատուն Նարեկ Վանեսյանն էր, որի կոռուպցիոն անցյալի մասին բազմիցս է գրվել: Այսինքն՝ Արսեն Թորոսյանը իրեն շրջապատել էր, ըստ տարբեր հրապարակումների, կոռումպացվածի համբավ ունեցող գործիչներով, եւ պետական բյուջեի միջոցների տնօրինումն իրականացվել է իրենց ցանկությամբ: Ասվածը փաստվում է նաեւ ֆինանսների նախարարության ստուգումների ակտում, որտեղ մեկ հիվանդության դեպքի միջին արժեքը Թորոսյանի նախընտրած բժշկական հաստատություններում հաշվարկվել է զգալիորեն թանկ՝ համեմատած խոշոր ու հայտնի հիվանդանոցների հետ:

Ըստ ֆինանսների նախարարության՝ փաստացի ծախսերի փոխհատուցման մեխանիզմով գործող բուժհաստատություններում մեկ հիվանդի բուժման միջին արժեքը կազմել է 380,118 դրամ, մինչդեռ դեպքային ֆինանսավորմամբ աշխատող կազմակերպություններում՝ 234,447 դրամ: Այսպիսով՝ առաջին խմբում մեկ դեպքի միջին արժեքը ավելի բարձր է եղել 148,671 դրամով:

Հարց է առաջանում՝ ինչու էր կորոնավիրուսի բուժումն այսքան թանկ, երբ Հայաստանի քաղաքացիների մեծամասնությունը կամ ինքնուրույն հաղթահարել է հիվանդությունը, կամ վարակված հարազատ ունեցել, բայց, վստահաբար, որեւէ պարագայում նման ծախսեր չեն արձանագրվել:

Այդուհանդերձ, նախարար Թորոսյանը իր նախընտրած բուժհաստատություններին հատկացրել է շռայլ գումարներ, իսկ մյուսներին՝ անհամեմատ քիչ:

Շարունակությունը եւ մանրամասները՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում:

Հշխանությունների, հատկապես Նիկոլ Փաշինյանի համար թիվ մեկ օրակարգային թեման շարունակում է մնալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Կաթողիկոսին «հեռացնելու» ձգտումը: Փաշինյանի թիմը, մեր տեղեկություններով, շարունակելու է տարբեր եղանակներով վարկաբեկել Կաթողիկոսին եւ նրա մոտ կանգնած հոգեւորականներին՝ նրանց անդադար հարցաքննությունների հրավիրելով՝ մինչեւ ճնշումները հասնեն անձամբ Կաթողիկոսին: Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ թիմը «բացահայտել» է նոր մեղադրանքի հիմք. ըստ նրանց՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գահակալության 26 տարիների ընթացքում վերջին անգամ Ազգային-Եկեղեցական ժողովն անցկացրել է 2017 թվականին, մինչդեռ նման ժողովները պետք է արվեն մի քանի տարին մեկ: Ըստ մեր աղբյուրների՝ այդ հավաքների ընթացքում հոգեւորականությունը քննարկում է եկեղեցու առջեւ ծառացած ներքին եւ արտաքին հարցերը: Հենց այդ ժողովն է ընտրում Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որոշումներ ընդունում ազգային-եկեղեցական հիմնահարցերի վերաբերյալ, լսում Կաթողիկոսի, Եկեղեցական-Ներկայացուցչական ժողովի, Գերագույն Հոգեւոր Խորհրդի եւ իր կողմից ձեւավորված հանձնաժողովների զեկույցները եւ անհրաժեշտության դեպքում կայացնում որոշումներ: Թեպետ սա բացառապես ներեկեղեցական եւ կառավարման ներքին խնդիր է, Նիկոլ Փաշինյանը, ըստ մեզ հասած տեղեկությունների, այն դիտարկում է որպես նոր ճնշման գործիք՝ Կաթողիկոսից պահանջելու պարզաբանում, թե ինչու ժողովները 2017-ից հետո չեն անցկացվել:

Լիլիթ Մակունցը, որ ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդականն է, ստացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նվերների հայտարարագրման ռեեստրում հայտարարագրված ամենաթանկարժեք նվերը: Հոկտեմբերի 25-ին Լիլիթ Մակունցը համագործակցության շրջանակում աշխատանքային հանդիպում էր ունեցել ամերիկյան Twins Buick GMC ընկերության գլխավոր տնօրեն, գործարար Տիգրան Սաֆարյանի հետ: Հանդիպման ընթացքում Մակունցին Սաֆարյանը նվիրել է 1 մլն 14 հազար դրամ արժեցող հանրագիտարան՝ 1 Encyclopaedia mundi հրատարակչության, Armenia Aeterna հավաքածուի բացատրական հանրագիտարան առանց հիմնական գրքի: Armenia Aeterna գիրքը հիմնական գիրքն է, որը պարունակում է 41 կարեւորագույն պատմական փաստաթղթերի ընտրանի, իսկ սեւ կոշտ կազմով գիրքը բացատրական հանրագիտարան է, որը նկարագրում է յուրաքանչյուր փաստաթղթի պատմությունը: Գրքերը վաճառվում են միայն որպես մեկ ամբողջական հավաքածու, եւ երկու գրքերի ընդհանուր արժեքը կազմում է 10 հազար ԱՄՆ դոլար:



Խնամի-ծանոթ-բարեկամ սկզբունքը մերժող իշխանությունների հետ խորհրդարանում հայտնված «Ա Թիվիի» «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման աշխատակից Հասմիկ Հակոբյանը փորձում է դասեր տալ լրագրողներին՝ մոռանալով սեփական անցյալը: Ամենաաղմկահարույց այդ հեռուստահաղորդումը, որի մասնակիցները հաճախ դառնում են համացանցի ծաղրի առարկա տարբեր տեսանյութերով, նաեւ հենց Հասմիկ Հակոբյանի շնորհքն է: Հիմա նա դարձել է իշխող ՔՊ վարչության անդամ եւ չի շփվում «Կիսաբացի ....» նախկին գործընկերների հետ. կարճ ասած՝ մոռացել է իր անցյալը: Հիշեցնենք, որ մինչ ՔՊ-ական դառնալը Հասմիկ Հակոբյանը նախկինում աշխատել է ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի կողմից հիմնադրված Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայում՝ որպես գործավարուհի: Հետո աշխատել է «Օրինաց երկիր» կուսակցությանը պատկանող մեդիալրատվական դաշտում եւ ՕԵԿ քարոզիչ է դարձել, իսկ ավելի ուշ՝ ՔՊ քարոզիչ՝ հայտնի գործարարի կայքում աշխատելով:

Շարունակությունը եւ մանրամասները՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՄԵՏԱՔՍԵ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ

«ԱՐՑԱԽ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՐՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ»

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Մեսամսե Հակոբյանը «ԱրմԼուր.էյէմ»-ի տաղավարում անդրադարձավ ԱՀ ԱԺ գործունեությանը, արցախահայության սոցիալական խնդիրներին եւ մի շարք այլ հարցերի:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում:

-Տիկին Հակոբյան, ինչ գործունեություն է այսօր ծավալում Արցախի Հանրապետության Ազգային ժողովը: Տարին մոտենում է ավարտին, եւ հետաքրքիր է իմանալ, թե ինչով են զբաղված պատգամավորները:

-Ցավով պետք է նշեմ, որ գործունեությունը, ընդ որում՝ պայմանավորված նաեւ որոշ պատգամավորների մոտեցումներով, չի կարող շատ ակտիվ լինել: Ակտիվ հատվածը քիչ է, բայց նրանք փորձում են հավատարիմ մնալ իրենց առաքելությանը, ոչ թե պաշտոնին, առավել եւս՝ երբ չկա նախկին հարմարավետությունը: Այդ ակտիվ պատգամավորները թույլ չեն տալիս, որ ՀՀ իշխանությունների ունեցած ցանկությունները իրականանա՝ այսինքն, որ ինստիտուտը վերանա որպես այդպիսին: Հիմնականում մեր ամենակարեւոր գործը միջազգային հարթակներում քաղաքական ուղղվածությամբ տարաբնույթ դերակատարների հետ ամենօրյա շփումներն են՝ Արցախի եւ արցախցիների վերադարձի իրավունքը բարձրաձայնելու նպատակով:

Սա կարեւորում եմ, որովհետեւ թեեւ առկա ներքին բոլոր խնդիրները Հայաստանի Հանրապետության ուշադրության կենտրոնում են, սակայն միջազգային հարթակների դերակատարումը խիստ անհրաժեշտ է: Այս իշխանությունները հավերժ չեն, բայց կարեւոր է, որ ժամանակի ընթացքում Արցախցիների իրավունքները չմարեն եւ չմոռացվեն: Երբ Հայաստանում լինեն ազգային իշխանություններ, այդ հարցը պետք է լինի նրանց օրակարգում:

-Տիկին Հակոբյան, արցախցիներին կոչ են անում մնալ այստեղ՝ մայր հայրենիքում: Ի՞նչ է արվում, որպեսզի նրանք չարտագաղթեն եւ կարողանան այստեղ ապրել, աշխատել եւ արարել:

-Իրականում արտաքին քաղաքականության մեջ մենք ավելի մեծ հաջողություններ ենք գրանցում, քան Հայաստանի Հանրապետության ներսում: Միջազգային հարթակներում դեռ չի եղել մի դեպք, որ մեր իրավունքների հարցը չընկալեն: Ինչ վերաբերում է Հայաստանի ներքին դաշտին՝ քաղաքականություն, որպես այդպիսին, փաստացի գոյություն չունի, այստեղ քաղաքականություն ասելով՝ մահակներ են հիշում:

Արցախցիների հանդեպ վերաբերմունքը յուրաքանչյուրն իր մաշկի վրա է զգում: Մենք շարունակաբար արձանագրում ենք խնդիրները՝ փորձելով տարբեր առիթներով ինչ-որ լուծման մասնակցել: Վերադարձի մասով՝ բացի ընդդիմության մեր գործընկերներից եւ արտախորհրդարանական քաղաքական ադեկվատ հատվածից, գրեթե ոչ ոք ընկալում չունի այդ հարցի վերաբերյալ: Եվ դա գործող իշխանությունների քաղաքական դիրքորոշման ու պայմանավորվածությունների արդյունքն է:

Սոցիալական առումով իրավիճակն իսկապես ամենացավալին է: Շատերը չեն գիտակցում, որ սա նույնպես քաղաքականություն է: Սոցիալական ծրագրերի կազմակերպումը եւս ներքին քաղաքական ուղղվածության դրսեւորում է: Հասկանալի է դառնում, որ գործող իշխանությունն այս քաղաքականությամբ ունի մեկ նպատակ՝ արցախցիներից ազատվել: Արտագաղթի ծավալները բոլորս ենք տեսնում: Կան նաեւ տարատեսակ կասկածելի ծրագրեր այլ երկրներից, որոնք, ըստ օդում կախված լուրերի, երբեմն ֆինանսավորվում են, ինչու ոչ, Ադրբեջանից կամ Թուրքիայից՝ արցախցիներին Հայաստանից հեռացնելու նպատակով: Եվ այս ամենը տեղի է ունենում իշխանությունների լռության կամ թույլտվության պայմաններում:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

Ի՞ՆՉ Է ԱՄԵԼ ՎԱԼՈԴՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ԿՐԱԿՈՑԻ ՊԱՀԻՆ

Փարաքարի ընդդիմադիր համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի սպանության գործով «Ժողովուրդ» օրաթերթին նոր, ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել:

Ըստ լրատվականի աղբյուրների՝ Վալոդյա Գրիգորյանը մինչ կրակոցները հասցրել է հարց ուղղել իր ընկերներին, սակայն այդպես էլ չի հասցրել լսել պատասխանը:

ArmLur.am-ի բացառիկ աղբյուրների փոխանցմամբ, դեպքի օրը Վալոդյա Գրիգորյանի եւ Արեն Աբրահամյանի հետ գտնված Արծրուն Գալստյանը, հիվանդանոցից դուրս գրվելուց հետո, պատմել է սեպտեմբերի 23-ի ողբերգական դեպքի մանրամասները: Նրա խոսքերով՝ Վալոդյա Գրիգորյանը մի պահ շրջվել է, նկատել մթության մեջ դեպի իրենց եկող անձին եւ ընկերներին հարցրել՝ «էս ո՞վ է»: Սակայն նա չի հասցրել լսել որեւէ պատասխան. նույն պահին մոտեցող անձը, վազելով առաջ գալով, սկսել է կրակել: Կրակոցների հետեւանքով դաժանորեն վերջ տրվեց Վալոդյա Գրիգորյանի կյանքին:

Հիշեցնենք, որ սպանությունը տեղի էր ունեցել սեպտեմբերի 23-ին Արագածոտնի մարզի Փարաքար համայնքում, երբ անհայտ անձը կրակ էր բացել ընդդիմադիր համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի եւ նրա հետ եղած Արեն Աբրահամյանի ուղղությամբ՝ պատճառելով մահացու վնասվածքներ: Դեպքը ցնցեց համայնքը, լայն արձագանք ստացավ հանրային դաշտում՝ առաջ բերելով բազմաթիվ հարցեր տեղի ունեցածի պատճառների եւ կազմակերպիչների վերաբերյալ: Ենթադրյալ պատվիրատուներն ու կազմակերպիչները դեռ մնում են չպարզված:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 24–ԻՑ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ ԶՈՐԱՅՐՈՒՄԸ

ArmLur.am-ը տեղեկանում է, որ այսօրվա՝ նոյեմբերի 20-ի կառավարության նիստում հաստատվելու է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու եւ զորացրում կատարելու մասին նախագիծը:

Այսպիսով, 2025 թվականի նոյեմբերի 24-ից մինչեւ 2026 թվականի հունվարի 31-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է կամ, որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաեւ Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված արական սեռի քաղաքացիների զորակոչը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 30-ի նիստում հավանություն տրվեց զինծառայության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագծին, ըստ որի՝ 2025թ. ձմեռային զորակոչից սկսած 24-ամսյա պարտադիր զինվորական ծառայությունը կդառնա 18-ամսյա:

ԲԱՔՎԻ ԲԱՆՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ Վ. ԷՈՒԼՋԵՔՋՅԱՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՎԱՏԱՑԵԼ Է

Բաքվի բանտում գտնվող Վիգեն Էուլջեքջյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, թեեւ վերջինս ստացիոնար բուժման կարիք ունի, սակայն նրան պատշաճ բուժօգնություն չի ցուցաբերվում, գրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Նա այլեւս չի կարողանում քայլել, իսկ բժիշկների կողմից նշանակված դեղորայքը նրան չի հատկացվում:

Երկար դադարից հետո ընտանիքի հետ հեռախոսազրույց է ունեցել, ինչից պարզ է դառնում, որ «խաղաղասեր» ադրբեջանցիներն ամեն ինչ անում են Վիգենին մահվան դուռը հասցնելու համար:

Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության փորձերը գովաբանող միջազգային կառույցներն ու երկրները շարունակում են անտեսել Բաքվի բանտերում գտնվող գերիների խնդիրը՝ առաջին պլան մղելով միայն սեփական աշխարհաքաղաքական եւ տնտեսական շահերը», - գրել է Աբրահամյանը:

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԱԱԾ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻՑ

Գործարար, բարերար, քաղաքական հայացքների համար շուրջ 4 ամիս կալանքի տակ գտնվող Սամվել Կարապետյանը ԱԱԾ մեկուսարանից ուղերձ է հղել.

«Մի՛ կարծեք, թե փոքրիկ խմբակը իր համար դրական արդյունքի է հասել: Սրբությունները ոտնահարելով, բանտերը լցնելով, ունեցվածք խլելով ու վախի մթնոլորտ ձեւավորել փորձելով՝ գուցե առավելագույնը եւս 6 ամիս պահես իշխանությունդ, բայց երկիր չե՛ս պահի, երկրի արժանապատվությունը չե՛ս վերականգնի, քո քաղաքացիների կյանքը չե՛ս լավացնի, պետության խնդիրները չե՛ս լուծի:

Նպատակասլացությունը բնորոշ է մեզ, մեր ժողովրդին, որի պատմությունը բազմաթիվ ծանր շրջաններ է ունեցել: Մենք, միեւնույնն է, հաղթահարել ենք բոլոր դժվարությունները ու շարունակել մեր ճանապարհը՝ հակառակ մեր թշնամիների բոլոր ջանքերին: Այդպես է լինելու նաեւ հիմա, չկասկածե՛ք:

Ընդամենը մի քանի ամսից շնորհավորելու ենք իրար արդարության հաղթանակի, արժանապատվության վերականգնման, չարիքի պարտության ու Հայաստանի համար նոր՝ բարեկեցության ու խաղաղության ժամանակաշրջանի սկզբի կապակցությամբ:

Ուրեմն՝ շարունակում ենք պայքարը ու գնում դեպի անվերապահ հաղթանակ՝ մե՛ր ձեւով:

19.11.2025թ.»:

Հիշեցնենք, որ Սամվել Կարապետյանը ավելի քան 4 ամիս է կալանավորված է:

ՀՐԱՉՅԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՄՆԱԼ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

«Մարտի 1»-ի գործով քննչական խմբի նախկին ղեկավար, այժմ փաստաբան Հրաչյա Մուշեղյանի կալանավորման որոշումը մնացել է անփոփոխ:

Վերաքննիչ քրեական դատարանը՝ դատավոր Գրիգոր Հովհաննիսյանի նախագահությամբ, մերժել է Մուշեղյանի կալանավորման որոշման դեմ հատուկ վերանայման բողոքը:

ՀՀ երկրորդ եւ երրորդ նախագահներին մեղադրանք առաջադրած քննիչը սեպտեմբերի 12-ին կալանավորվել էր՝ Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Ջոն Հայրապետյանի որոշմամբ:

Վերաքննիչ քրեական դատարանն անփոփոխ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը՝ մերժելով հատուկ վերանայման բողոքը: «Փաստինֆո»-ն հայտնում է, որ պաշտպաններն օրերս դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել, որի վարույթ ընդունման վերաբերյալ որոշում դեռեւս առկա չէ:

ՈՒՄ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԿՄԱՄՆԱԿՑԻ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ

Նիկոլ Փաշինյանը շարունակում է մասնակցել կիրակնօրյա պատարագներին:

Նոյեմբերի 18-ին նա հայտարարեց, որ նոյեմբերի 23-ին Արարատի մարզի Արարատ գյուղի Սբ. Հակոբ եկեղեցում մասնակցելու է Տեր Երվանդ քահանա Բաբայանի ձեռամբ մատուցվող սուրբ եւ անմահ պատարագին:

Տեր Երվանդ (ավազանի անունը՝ Սայադ) քահանա Բաբայանը ծնվել է Արարատում, սովորել՝ նույն քաղաքի 1 միջնակարգ դպրոցում, այնուհետեւ ուսումը շարունակել քաղաքի թարգմանչաց վարժարանի հումանիտար հոսքում: Սովորել է նաեւ տեղի երաժշտական դպրոցի շվիի բաժնում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 2000-2004 թթ. սովորել է Վազգենյան Հոգեւոր Դպրանոցում:

2004-2006 թթ. ուսումը շարունակել է Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Ճեմարանն ավարտելուց հետո շուրջ 3 տարի ծառայել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, այնուհետեւ՝ շուրջ մեկ տարի ծառայել է Երեւանի Սուրբ Երրորդություն եկեղեցում՝ որպես սարկավագ:

2009 թ. դեկտեմբերի 13-ին ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Մի քանի ամիս ծառայել է Խոր Վիրապ վանքում:

2010 թ. մայիսից մինչեւ 2012 թ. հունվար ամիսը ծառայել է Սիսիանի շրջանի Դարբաս գյուղի Սուրբ Ստեփաննոս եկեղեցում:

2012 թ. փետրվարի 1-ից առ այսօր ծառայում է Արարատյան Հայրապետական թեմում՝ Արտաշատի Ներքին Դվին գյուղի Սուրբ Հարություն եկեղեցում:

2013 թ. փետրվարի 5-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ ստացել է լանջախաչ: Ամուսնացած է, ունի 1 զավակ:

ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ՝ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՈՒՐՋ

ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԿԿՀ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ Է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ուսումնասիրել եւ քննության է առել ArmLur.am-ի հրապարակած հոդվածը՝ «7 բնակավայրերի համայնքապետը միլիոնատեր է. ինչ ունեցվածք է հայտարարագրել Նորայր Սարգսյանը» վերնագրությամբ:

Հոդվածում գրել էինք, որ վերջին 24 տարիներին ղեկավարելով Նաիրի համայնքը՝ Նորայր Սարգսյանը 28 մլն դրամով ավելացրել է իր տարեկան եկամուտները վերջին 2 տարում:

Սարգսյանն ունի 10 անշարժ գույք՝ 5 հողամաս, 3 հողին ամրակցված անշարժ գույք, 2 արտադրական նշանակության շինություն: Անշարժ գույքերը ձեռք են բերվել տարբեր տարիների՝ ժառանգության կամ գնման եղանակով: Խոշորացված համայնքի ղեկավար Սարգսյանը հայտարարագրել է 1982 թվականի արտադրության տրակտոր «ՄՏԶ-82» մակնիշի: Համայնքի ղեկավարի՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում տեղ գտած առաջին հայտարարագրի համաձայն, որը ներկայացվել է 2022 թվականին, անշարժ գույքերը փոփոխության չեն ենթարկվել:

Համայնքի ղեկավարի կանխիկ դրամական միջոցները կազմել են 29 մլն դրամ, սակայն 2021 թվականի հաշվետու տարվա հայտարարագրում առկա տվյալներում կանխիկ դրամական միջոցներն աճել են գրեթե 16 մլն դրամով: Տեղեկացնենք, որ հաշվետու տարվա 32 մլն դրամ եկամտից 5 մլն 316 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է, որը ստացել է ՀՀ Կոտայքի մարզի «Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկից: 708 հազար դրամը կենսաթոշակ է ՀՀ միասնական սոցիալական ծառայությունից:

Մեր հրապարակման հիման վրա Հանձնաժողովը իրականացրել է «Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերեւույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն», ինչից հետո որոշել է ավարտել ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը, ինչպես նաեւ առաջարկվել է կատարել ուղղում հայտարարագրերում:

Լավ է, որ հոդվածից հետո Նորայր Սարգսյանի հայտարարագիրն ուսումնասիրվել է եւ առաջարկվել է շտկումներ անել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱԼԱՆՔ Է ԴՐՎԱԾ

Աժ պատգամավոր, Երեւանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի գույքերի ու դրամական միջոցների վրա կալանք է դրված: Այս մասին տեղեկացել ենք ՀՀ գլխավոր դատախազությունից, որը նաեւ տեսանյութ է հրապարակել:

Գլխավոր դատախազությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցով, պահանջում է Տարոն Մարգարյանից ու նրան փոխկապակցված անձանցից բռնագանձել ավելի քան 2 մլրդ դրամի գույքեր ու դրամական միջոցներ:

Հիշեցնենք նաեւ, որ դատախազը 2025 թվականի սեպտեմբերի 8-ին դատարան է հանձնել Տարոն Մարգարյանի վերաբերյալ քրեական վարույթի նյութերը:

Տարոն Մարգարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվել էր այն բանի համար, որ նա, 2009 թվականի հուլիսի 6-ից մինչեւ 2011 թվականի նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալի պաշտոնը, իսկ 2011 թվականի նոյեմբերի 15-ից մինչեւ 2018 թվականի հուլիսի 9-ն ընկած ժամանակահատվածում Երեւանի քաղաքապետի պաշտոնը, շահադիտական եւ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, ինչպես նաեւ այլ անձանց օժանդակությամբ, իշխանական, ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույք, վարչական պատասխանատվության միջոցներ չի կիրառել պետական սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթած անձանց նկատմամբ:

Քրեական գործը գտնվում է նախնական դատալսումների փուլում:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԱՐՇԱՎԻՆ

Մեծ Բրիտանիան հետեւում է Հայաստանի կառավարության եւ Հայ Առաքելական եկեղեցու միջեւ ստեղծված իրավիճակին, հայտարարել է Մեծ Բրիտանիայի Եվրոպայի եւ Հյուսիսային Ամերիկայի հարցերով պետնախարար Ստեֆեն Դաուութին:

«Մենք ակնկալում ենք, որ բոլոր գործողությունները կհամապատասխանեն Հայաստանի սահմանադրական եւ իրավական շրջանակներին՝ ապահովելով պատշաճ դատավարության ընթացք եւ երաշխավորելով, որ բոլոր անձինք արժանանան արդար վերաբերմունքի օրենքի համաձայն, իսկ դատական գործընթացները լինեն թափանցիկ եւ անաչառ», - նշել է Դաուութին:

Նա ընդգծել է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը շարունակում է վճռականորեն հանձնառու լինել ամբողջ աշխարհում կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքի խթանմանը եւ պաշտպանությանը:

Հայտարարությունը հնչել է Հայաստանի Կառավարության եւ Հայ Առաքելական եկեղեցու հոգեւորականության միջեւ աճող լարվածության ֆոնին, ինչը մտահոգություն է առաջացնում միջազգային գործընկերների շրջանում:

ԹՈՒՐՔԻԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՇՓՈՒՄՆԵՐԸ ՀՀ-Ի ՀԵՏ

Թուրքիան պատրաստ է կարգավորել հարաբերությունները Հայաստան Հանրապետության հետ այն դեպքում, երբ Երեւանն ու Բաքուն ստորագրեն վերջնական խաղաղության պայմանագիր: Այս մասին հայտարարել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը՝ Թուրքիայի Ազգային ժողովում բյուջեի հանձնաժողովում ունեցած ելույթի ժամանակ:

Ֆիդանի խոսքով՝ Հայաստան-Ադրբեջան եւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ճանապարհին կարեւոր են Հայաստանի Սահմանադրության փոփոխության հարցը եւ Հայաստանի հարավով նախատեսվող հաղորդակցային միջանցքը, որոնք, ըստ նրա, չեն ներառվել օգոստոսի 8-ին Վաշինգտոնում կողմերի միջեւ նախաստորագրված խաղաղության փաստաթղթում:

Նա նշել է, որ այս «զգայունությունների» հաղթահարումից եւ Բաքվի հետ վերջնական համաձայնագրի կնքումից հետո Թուրքիան կբացի սահմանը Հայաստանի հետ:

ԿԱՇԱՌՔԻ ՔՐԳՈՐԾԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԵՆ «ԳԼԻՆԿԱ ՄՈԼԻ» ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԸ

Հոկտեմբերի 4-ին հրապարակվել էր, որ կալանավորվել է փաստաբան Արմինե Հարությունյանը: ArmLur.am-ին երեկ հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեն փաստաբանի եւ դատարանի աշխատակիցների կաշառքի գործով նախաքննության ավարտ է հայտարարել եւ այն ուղարկել է դատարան:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Անահիտ Վաչագանի Գեւորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր օգտին ապօրինի գործողության համար, դատական իշխանության ոլորտում մշտապես պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձին՝ դատավորին, տվել է խոշոր չափերով կաշառք:

Էմիլյա Հրաչյայի Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա դատական իշխանության ոլորտում մշտապես պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձին՝ դատավորին, օժանդակել է ստանալ խոշոր չափերով կաշառք՝ այն տվողի օգտին ապօրինի գործողության համար: Նա զբաղեցրել է Երեւանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի «Աջափնյակ-2» նստավայրի գործավարի պաշտոնը:

Արմինե Լեւոնի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա դատական իշխանության ոլորտում մշտապես պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձին՝ դատավորին, օժանդակել է ստանալ ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ դատական համակարգում տեղեկություններ կան, որ ենթադրյալ կաշառքի թեման կապ ունի «Գլինկա Մոլի» սեփականատերերի հետ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՎԱՐՏՎԵԼ Է ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ավարտվել է անչափահաս որդու կողմից հոր նկատմամբ սպանության փորձ կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ քննչական կոմիտեից:

Իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել է, որ անչափահաս որդին հոր կողմից մորը պարբերաբար վիրավորանքներ հասցնելու եւ նախկինում ծեծի ենթարկելու պատճառով վրեժխնդիր լինելու շարժառիթով, խոհանոցային դանակով մեկ տասնյակից ավելի հարվածներ է հասցրել քնած վիճակում գտնվող հոր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով բազմաթիվ մարմնական վնասվածքներ, սակայն հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներում չի իրագործվել՝ վերջինիս արթնանալու եւ դանակը որդու ձեռքից խլելու պատճառով:

Անչափահասի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով (մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից սպանության փորձը), որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՎԵՃԸ ԱՎԱՐՏՎԵԼ ԷՐ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ

Նոյեմբերի 18-ին՝ կեսգիշերն անց, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգահարել անհայտ քաղաքացի եւ հայտնել, որ Հերացու փողոցում դանակով իրեն հարվածել են, դանակահարողն էլ տեղում է:

Հաղորդում է ստացվել նաեւ Հերացի թիվ-1 համալսարանական հիվանդանոցից. կրծքավանդակի կտրած-ծակած վերքով բուժօգնության էր տեղափոխվել օտարերկրյա քաղաքացի 24-ամյա երիտասարդ:

Ըստ բժշկի՝ տուժածն ի վիճակի չէր հաղորդում տալու:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում Մարաշի համայնքային ոստիկանները պարզեցին, որ կեսգիշերին, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով մարմնական վնասվածքը պատճառել է մեկ այլ օտարերկրացի 28-ամյա երիտասարդ, որը բնակվում էր հենց Հերացու փողոցում:

Մայրաքաղաքի պարեկների հետ ձեռնարկած հետագա միջոցառումներով 28-ամյա օտարերկրացին կարճ ժամանակ անց հայտնաբերվեց Ջահուկյան փողոցում, ձերբակալվեց ու տեղափոխվեց բաժին:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԻ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անձի հետախուզման բաժնում ստացված օպերատիվ տվյալներն իրացնելիս Նոյեմբերի 18-ին՝ ժամը 13:27-ին, մայրաքաղաքի Հանրապետության փողոցում հայտնաբերվել է Մոսկովյան փողոցի բնակիչ 42-ամյա տղամարդը:

Նոյեմբերի 5-ից նա հետախուզվում էր առանձնապես խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելու մեղադրանքով, խափանման միջոցը՝ կալանք:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ նոյեմբերի 18-ին վարչություն է ներկայացել Կամարիս գյուղի բնակիչ 22-ամյա երիտասարդը:

Հոկտեմբերի 23-ից նա հետախուզվում էր զենքի կամ հարմարեցված առարկայի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով խուլիգանության եւ հրազենի, ռազմամթերքի եւ այլ նյութերի ապօրինի շրջանառության մեղադրանքով, խափանման միջոցը՝ կալանք:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄՈՏՈՑԻԿԼԱՎԱՐԸ ԿՈՂԱՇՐՋՎԵԼ Է, ՀԱՅՏՆՎԵԼ ԳԵՏԻ ՄՅՈՒՍ ԱՓԻՆ

Նոյեմբերի 18-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 22:00-ի սահմաններում Մեղրաձոր գյուղում մոտոցիկլավարը դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջված հայտնվել Մարմարիկ գետի մյուս ափին:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով մոտոցիկլավարին առաջինը օգնության է հասել նրա կինը, ով մեկ այլ մոտոցիկլով է եղել, ապա օպերատիվորեն ժամանած «Հրազդան» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը նրան տեղափոխել է հիվանդանոց, սակայն ճանապարհին, գիտակցության չգալով, տղամարդը մահացել է:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի 1-ին վաշտի 1-ին դասակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Ալբերտ Մարտիրոսյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Վահագն Կարապետյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Կառլեն Բաղյանի, վաշտի հրամանատար Վահե Գիգոլյանի եւ նույն գումարտակի 2-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար, օրվա պատասխանատու Սահակ Գալստյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկներ Հրանտ Ներսիսյանը եւ Սարգիս Քոչարյանը:

Դեպքի մասին ՊԾ Կոտայքի մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչություն, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Հովհաննես Չալաբյանի, վարչության պետի տեղակալ Աշոտ Մելքումյանի եւ օրվա հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դեպքի փաստով քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է մահացած մոտոցիկլավարի ինքնությունը:

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Համայնքային ոստիկանության Կումայրիի բաժնի ծառայողները տեղեկություններ էին ստացել, որ Գյումրի քաղաքի բնակիչ 27-ամյա երիտասարդը թմրանյութ է պահում եւ օգտագործում:

Տեղեկությունը հաստատվեց. նոյեմբերի 17-ին բաժնում երիտասարդը խոստովանեց, որ մարիխուանա է պահում:

Գյումրեցի երիտասարդը ձերբակալվեց եւ տեղափոխվեց նախաքննական մարմին: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում նրա տանը կատարված զննությամբ հայտնաբերվեց 212 գրամ մարիխուանա եւ 64 գրամ կանեփի սերմ:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 148 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՂԲԱՎԱՅՐԵՐԸ՝ ՎԱՏԹԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ

Տավուշի մարզի 4 խոշոր համայնքներում՝ Նոյեմբերյանում, Բերդում, Իջեւանում եւ Դիլիջանում գործող շատ աղբավայրեր անմխիթար վիճակում են: Դրանք ցանկապատված չեն կողմնակի մարդկանց ու կենդանիների մուտքն արգելելու , աղբավայրում առկա զանազան թափոնների տարածումը քամուց կանխելու համար: Աղբավայրերում հաճախ, չպարզված պատճառներով, հրդեհներ են բռնկվում, որոնց մարումը օրեր է տեւում: Նման վիճակ վաղուց՝ տասնամյակներ շարունակ, գոյություն ունի. իրավիճակը բարելավելու նպատակով գործուն միջոցառումներ չեն ձեռնարկվում, աղբավայրերի կառավարման հետ կապված իրավիճակը չի բարելավվում: Հատկապես վատ վիճակում է Դիլիջան խոշոր համայնքի աղբավայրը: Այն ցանկապատված չէ, աղբավայրում ամեն օր արածում են կովեր, որոնք սնվում են աղբավայրում թափված թունավոր եւ ոչ թունավոր նյութերով:

Դիլիջանի աղբավայրում հաճախ են լինում հրդեհներ, ծուխը պատում է աղբավայրի տարածքը: Դիլիջանի աղբավայրը Աղստեւ գետի հովիտը դարձրել է էկոլոգիական աղետի տարածք: Տավուշի մարզպետարան կատարած տեղեկատվական հարցմամբ տեղեկացել ենք, որ Տավուշի մարզում գործում է 25 աղբավայր:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը հարցում ենք արել՝ Հայաստանում քանի՞ աղբավայր կա, դրանցից քանի՞սը՝ որ մարզում, եւ քանի՞սն են համապատասխանում բնապահպանության օրենսդրության պահանջներին:

Հոկտեմբերի 27-ին շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյանի ստորագրությամբ պատասխան ենք ստացել, որտեղ նշված է. «Համաձայն Կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 992-Ա որոշման՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության կազմակերպման եւ սանիտարական մաքրման ոլորտում լիազոր մարմինը տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն է: Շրջակա միջավայրի նախարարությունը կոշտ կենցաղային թափոնների տեղադրման կամ թաղման գործունեություն իրականացնելու լիցենզիա եւ լիցենզիայի ներդիր տրամադրել է 4 կազմակերպության՝Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի եւ Արագածոտնի մարզերում գործունեություն իրականացնելու համար»:

Փաստորեն, Տավուշի եւ այլ մարզերում, մայրաքաղաք Երեւանում կոշտ կենցաղային թափոնների տեղադրումը, թաղումը, աղբավայրերի կառավարումը կատարվում է ոչ լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Պարզ է, որ աղբավայրերի ոչ մասնագիտական կառավարումը պետք է հանգեցներ ու հանգեցրել է համայնքների աղբավայրերի վատթար վիճակին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՐՄԻՐ ՍԱՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԱՆՀԱՅՏ Է

«ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ

Ինչպես բազմիցս հայտնել ենք, «Օրդ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ցանկանում է Արտաշատ եւ Վեդի խոշորացված համայնքների յոթ գյուղերին հարող Կարմիր սարում կրաքարի հանքարդյունահանում իրականացնել եւ ցեմենտի գործարան կառուցել: Անցած տարի նույն պահանջով դիմել էր նրա ֆույր ընկերությունը՝ «Օրդ» ՍՊԸ-ն, եւ նախարարության կողմից ստացել 8 կետով հիմնավորված բացասական եզրակացություն:



Այգեզարդի ««Կորիզ» երիտասարդական եւ համայնքային զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ Արփինե Խաչատրյանը ArmLur.am-ին փոխանցեց, որ ինչպես անցած տարի, այս տարի նույնպես, հանրային լսումները Գինեվետ գյուղում ուղեկցվել են բազմաթիվ խախտումներով: Իրենց բարձրացրած հարցերին «Օրդ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի աշխատակիցները որեւէ հիմնավոր պատասխան չեն տվել՝ պատճառաբանելով, թե դեռ պատրաստի ծրագիր չունեն:

ArmLur.am-ը երեկ՝ առավոտյան, տեղեկացել էր նաեւ, որ Վեդու ավագանին հերթական նիստի ժամանակ իր քվեարկությամբ նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն կտա «Օրդ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործունեությանը:

«Ես եւ հարակից գյուղերում բնակվող նախաձեռնող խմբի անդամները բազմաթիվ նամակներ ենք ուղարկել տարբեր գերատեսչությունների, որպեսզի իրենց լիազորությունների սահմաններում թույլ չտան այս աղետալի նախագծի իրականացումը, քանի որ Կարմիր սարը գտնվում է Արարատյան դաշտի ամենասրտում եւ այստեղ ընդերքօգտագործման ու ցեմենտի գործարանի աշխատանքները մեծ ռիսկեր են պարունակում ոչ միայն տեղացիների առողջության, այլեւ մի հսկա գյուղատնտեսական շրջանի կայունության եւ ՀՀ պարենային անվտանգության համար», - ասում է Արփինե Խաչատրյանը:

Բացի դրանից, Կարմիր սարը կենսաբազմազանության եզակի օրրան է. ըստ WWF-ից ստացված տվյալների՝ այն կարմիրգրքային 14 տեսակ բույսերի աճելավայր եւ 16 տեսակ կենդանիների ապրելավայր է:

Այսպիսով. ովքեր էին պայքարում՝ Կարմիր սարը հանքի վերածելու համար

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս գրել է՝ Կարմիր սարը, ունենալով կրաքարի պաշարներ, հայտնվել էր միաժամանակ մի քանի հանքարդյունահանողների ուշադրության թիրախում՝ «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ, «ԴԻԳԸՆԴԻԳ» ՍՊԸ, «ԳՌԱՆՈՒԼՍ» ՍՊԸ, «ՕՐԴ» ՍՊԸ, «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ:

Այս կազմակերպությունները կապված կամ փոխկապակցված են նախկին պաշտոնյաների հետ:

Հանքի համար կռիվ տվողներից մեկը «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն է, որի 100% բաժնետերը ՀՀ հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ) աշխատակազմի նախկին ղեկավար Դավիթ Սուքիասյանն է:

Կառավարությունը 2024 թվականի ապրիլին հավանություն էր տվել «Ավան Թաուերս» բազմաբնակարանային համալիրը մոտ 1 000 հանրային ծառայողների համար կառուցելու ծրագրին, որը առաջարկել էր «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն: Նմանատիպ մի ծրագրում էլ ներգրավված են հանքի համար պայքարող հաջորդ ընկերությունների սեփականատերերը՝ «ՕՐԴ» ՍՊԸ-ի եւ «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի սեփականատեր Օրդուխանյանների ընտանիքը՝ Սամվել եւ Տիգրան Օրդուխանյանները: Պարզ է դարձել, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՇՄԱԳ փորձաքննական կենտրոնը բացասական եզրակացություն է տվել «ՕՐԴ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտին՝ Կարմիր սարի տարածքում կրային կավակրաքարերի հանքարդյունահանման վերաբերյալ:

Հասարակական ճնշումներից հետո բոլոր ընկերությունները, հասկանալով հետագա դժվարություններն ու ծագած խնդիրները, հետ կանգնեցին սարը հանքի վերածելու մտքից՝ բացի Օրդուխանյանների «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ից:

Օրդուխանյանները Երեւանի կենտրոնում՝ Աբովյան-Թումանյան խաչմերուկում, նորակառույց են վեր խոյացնում:

Շենքը հայտնի պատմություն ունի, քանի որ շինարարության պատճառով վտանգված են հարակից անհատական բնակելի տները, որոնցից մեկը պատկանում է Անդրանիկ սարկավագին: Ըստ Օրդուխանյանների եւ Երեւանի քաղաքապետարանի Կենտրոն վարչական շրջանի միջեւ եղած պայմանավորվածության՝ 12 հարկանի բնակելի շենքի առաջին հարկը կառուցելուց հետո ընկերությունը այն պետք է նվիրեր համայնքին՝ որպես անվճար մանկապարտեզ:

Օրդուխանյանները, հաշվի չառնելով որեւէ բողոք, հիմա էլ ակտիվ շինարարություն են անում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

IDBank

ԱՄՆ-ՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ

Վերջերս IDBank-ը գրանցեց իր հերթական մեծ հաջողությունը՝ ԱՄՆ Դաշնային ռեզերվային համակարգի խորհրդի՝ 2025 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ թույլատրվեց Բանկին ներկայացուցչական գրասենյակ բացել ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքում:

IDBank-ի Վարչության նախագահ Միհր Աբրահամյանի խոսքով՝ Բանկի համար այս թույլտվությունը ռազմավարական կարեւորություն ունի. այն բանկի ֆիզիկական ներկայությունն է ապահովելու ԱՄՆ շուկայում, մասնավորապես՝ հայաշատ Գլենդելում եւ հնարավորություն է տալու ներկա եւ պոտենցիալ հաճախորդներին ծանոթանալ բանկի բոլոր ծառայություններին. «IDBank-ի ներկայացուցչական գրասենյակը ԱՄՆ-ում մեծ քայլ առաջ է եւ մեզ ավելի մոտ է դարձնում մեր ամերիկաբնակ հայրենակիցներին, վստահ ենք՝ կնպաստի նաեւ բիզնեսի հնարավորությունների ընդլայնմանը մեր երկրում եւ համագործակցության նոր ուղիներ կբացի Բանկի եւ մեր հաճախորդների համար», - ասաց Միհր Աբրահամյանը:

Գլենդելի ներկայացուցչական գրասենյակն իրականացնելու է խորհրդատվական, տեղեկատվական բնույթի գործառույթներ՝ նպատակ ունենալով պոտենցիալ հաճախորդներին ներկայացնել Բանկի ընթացիկ եւ նոր պրոդուկտները, հաստատել եւ պահպանել իր հաճախորդների հետ կապը:

IDBank-ի Պրեմիում բանկային ծառայությունների վարչության ղեկավար Լիդա Սաֆարյանի խոսքով՝ սա հայաստանյան բանկային համակարգի համար նշանակալի իրադարձություն է. «IDBank-ը ոչ միայն միջազգային լավագույն փորձը ներդնում է իր գործունեության մեջ, այլ նաեւ կապ է հաստատում միջազգային շուկաների հետ եւ ստեղծում հետագա համագործակցության ամուր հիմքեր: Բանկի ներկայացուցչությունը կլինի այն կապող օղակը, որի շնորհիվ կամրապնդվի արտերկրում գտնվող մեր հայրենակիցների եւ Հայաստանի միջեւ կապը՝ բացելով նոր դռներ եւ հնարավորություններ»,- ասել է Լիդա Սաֆարյանը:

Այսպիսով, IDBank-ը հայաստանյան ծավալուն գործունեությունից բացի ընդլայնվում է նաեւ արտերկրում եւ Բանկի ԱՄՆ ներկայացուցչությունը շուտով դռները կբացի մեր հայրենակիցների համար, ինչը համահունչ է ID Group ընկերությունների խմբի՝ միջազգային էքսպանսիայի ռազմավարությանը:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է
ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 25 պատահար, 3 մարդ մահացել է, 31-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՍԻԳԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԸ

Կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի որոշման համաձայն՝2025 թվականի նոյեմբերի 20-ից մինչեւ 2026 թվականի փետրվարի 1-ը Սեւանա լճում խստիվ արգելվում է սիգի արդյունագործական որսը:

ArmLur.am-ի փոխանցմամբ՝ այս մասին իրազեկող տեսանյութ եւ հաղորդագրություն է տարածել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը:

«Այս որոշումը ռազմավարական քայլ է Սեւանի կենսաբազմազանությունը երաշխավորելու համար: Այն ուղղված է հիմնականում սիգի բնական վերարտադրությանն աջակցելուն՝ դրանով իսկ ապահովելով լճի ձկնային պաշարների կայուն եւ արդյունավետ վերականգնումը», - ընդգծված է գերատեսչության պարզաբանման մեջ:

Որսի կանոնները խախտելու, ինչպես նաեւ ապօրինի որսի դեպքում նախատեսվում է օրենքով սահմանված խիստ վարչական ու քրեական պատասխանատվություն:

Նոյեմբերի 20-ից հետո Սեւանա լճում հայտնաբերված նավակների եւ որսի միջոցների համար կկիրառվեն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Կորել է Շողակաթ Գրիգորի Մարգարյանի՝ Երեւանի տնտեսաիրավագիտական համալսարանի կողմից 2005թ. տրված AB 024376 դիպլոմը:

Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Կորել է Աննա Վաղարշակի Բաղդասարյանի՝ Երեւանի հենակետային քոլեջի կողմից 1993թ. տրված CT-I 259260 դիպլոմը:

Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

Կորել է ՄՏՋ-80 մակնիշի տրակտորի՝ 5436 ԱԽ պետհամարանիշը:

Գտնողին խնդրում ենք զանգահարել 094 111 086 հեռախոսահամարով: Սասուն Մելքումյան:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչ «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2025թ.-ի դեկտեմբերի 30-ը, երկարաձգվում են մինչեւ 2026թ.-ի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 56-45-13 կամ այցելել բորսա՝ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչ «Ֆլորես Աճուրդի տուն» ՍՊԸ -ի կողմից իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2025թ.-ի դեկտեմբերի 30-ը, երկարաձգվում են մինչեւ 2026թ.-ի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 52-61-85 կամ այցելել բորսա՝ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ԲԱՆԿԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է Visa Business Platinum ԱԿՆՔԱՐՏ

«Ֆասթ» բանկը թողարկել է դրեմիում դասի Visa Business Platinum ԱկնՔարs, որը նախատեսված է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռներեցների համար: ԱկնՔարտը մշակված է հատուկ այն ընկերությունների եւ ձեռնարկատերերի համար, որոնց աշխատակիցները հաճախ են մեկնում գործուղումների եւ ունեն բիզնեսին առնչվող բազմազան ծախսեր:

Այն պարզեցնում է ֆինանսական բաժինների, հաշվապահների, գնումների եւ օպերացիոն թիմերի առօրյա աշխատանքը՝ ապահովելով ծախսերի հստակ կառավարում եւ վերահսկողություն:

Visa Business Platinum ԱկնՔարտն աշխատակիցների ճանապարհորդությունները դարձնում է հարմար եւ հաճելի. քարտապանները հնարավորություն ունեն մուտք գործել օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներ, օգտվել Զվարթնոցի եւ այլ միջազգային օդանավակայանների Fast Track ծառայությունից՝ շրջանցելով կանոնավոր հերթերը: Visa Business Platinum ԱկնՔարտը նախատեսում է նաեւ միջազգային ամբողջական ճանապարհորդական ապահովագրություն: ԱկնՔարտը գործում է չորս արժույթով՝ դրամ, դոլար, եվրո եւ ռուբլի:

ԱկնՔարտի քարտապանների ուղեբեռը Զվարթնոց օդանավակայանում անվճար կփաթեթավորեն, մինչեւ տարեվերջ հաճախորդները կարող են նաեւ անվճար կայանել իրենց մեքենան օդանավակայանի կայանատեղիում 1-2 ժամ տեւողությամբ: Visa Business Platinum ԱկնՔարտը ներառում է նաեւ Visa Concierge-ի՝ անձնական օգնականի ծառայությունը, որը 24/7 ռեժիմով կպատասխանի բոլոր հարցերին եւ կկատարի առաջադրանքներ՝ ճամփորդությունների կամ միջոցառումների տոմսերի ամրագրումներ, նվերների առաքումների կազմակերպում, խորհրդատվություն եւ այլն: Քարտի բոլոր առավելություններին ծանոթանալու համար անհրաժեշտ է անցնել հետեւյալ հղումով:

Հավելենք նաեւ, որ «Ֆասթ» բանկում քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաճախորդները կարող են ստանալ մինչեւ 5% տարեկան տոկոսային եկամտաբերություն (տարեկան տոկոսային եկամտաբերությունը մինչեւ 5,12%): Քարտի տարեկան սպասարկման վճարը 15.000 դրամ է: Մանրամասներին ծանոթանալու համար անհրաժեշտ է անցնել հետեւյալ հղումով:

Visa Business Platinum ԱկնՔարտ պատվիրելու համար անհրաժեշտ է մոտենալ «Ֆասթ» բանկի 24/7 գործող որեւէ մասնաճյուղ, ապա նախընտրած հասցեով ստանալ այն առաքումով: «Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՉԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ. «ԱԿԲԱ» ԲԱՆԿ

Երրորդ անգամ «Ակբա» բանկի գլխավոր հովանավորությամբ Երեւան է տեղափոխվում ֆրանսիական շունչը՝ Ֆրանկոֆեսթը: Ֆրանսիական գրքի ու արվեստի փառատոնին այս տարի ընթերցողներին հայերեն թարգմանությամբ ներկայացվեց չորս նոր գիրք:

Փառատոնի գլխավոր հյուրը ֆրանսիացի ժամանակակից գրող, փիլիսոփա Պասկալ Բրուկներն էր, ով ժամանել էր Հայաստան՝ մասնակցելու իր հեղինակած «Իմ փոքրիկ ամուսինը» գրքի հայերեն հրատարակության շնորհանդեսին:

«Մեր գլխավոր նպատակն է թարգմանել եւ Հայաստանում ներկայացնել ֆրանսալեզու ժամանակակից գրականությունը՝ դրան ներգրավելով ֆրանսերեն իմացող ուսանողներին, դասախոսներին եւ տարբեր լսարաններին: «Ակբա» բանկի հետ Newmag-ը համագործակցում է իր հրատարակչական ծրագրի երեւի առաջին իսկ օրվանից: Ուրախ ենք, որ բանկը Ֆրանկոֆեսթի գլխավոր գործընկերն է արդեն երրորդ տարին անընդմեջ: Գնահատում ենք «Ակբայի» հանձնառությունն աջակցելու ժամանակակից ֆրանկոֆոն եւ որակյալ բովանդակության ստեղծմանը»,- նշել է Newmag հրատարակչության ղեկավար Արտակ Ալեքսանյանը:

«Ֆրանսիական գրականությունը ներկայացնող այս փառատոնը նոր հնարավորություն է ստեղծում ֆրանսիացի գրողների համար: Սա իմ առաջին գիրքն է Հայաստանում, եւ ես բավական անհանգիստ եմ՝ տեսնելու, թե ինչպես մարդիկ կընդունեն այն: Հայ-ֆրանսիական կապերն ավելի քան մեկ դարի պատմություն ունեն: Գրականությունն այդ համագործակցության մի մասն է կազմում»,- նշել է գրող, փիլիսոփա Պասկալ Բրուկները:

Այս տարի առաջին անգամ 49 երկրների հետ Հայաստանը ներկայացրեց Գոնկուր մրցանակակրի իր թեկնածուին: Ազգային ժյուրիի ընտրությամբ Գոնկուրի հայաստանյան հաղթողը Գաել Ֆայի «Ժակարանդա» վեպն է:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. «ՌԵՆՇԻՆ», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

Հայաստանի տնտեսության երկու խոշոր ընկերություններ միավորում են իրենց ջանքերը՝վաղվա Երեւանը ստեղծելու համար:

«Ռենշին» ընկերությունը եւ «Ամերիաբանկը» համապարփակ համագործակցության պայմանագիր կնքեցին՝ Skyline նախագիծն ավելի մոտ դարձնելով Հայաստանի երկնաքերերով առաջին թաղամասի ապագա բնակիչներին:

Վստահության վրա հիմնված այս համագործակցությունը լայն հնարավորություններ է բացում «քաղաք՝ քաղաքում» կոնցեպտով կառուցվող նորարարական թաղամասում բնակության եւ ներդրումային նպատակով անշարժ գույք ձեռք բերել ցանկացողների համար:

Վարկային այս հրապուրիչ պայմանները հասանելի են ինչպես Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները, այնպես էլ արտասահմանում բնակվողները: Դառնալով Skyline-ի բնակիչ՝ նրանք ուղեգիր են ստանում դեպի ժամանակից մարդու ապագա:

Այս համագործակցությունը վստահության եւ երկարաժամկետ տնտեսական առաջընթացին միտված լինելու մասին է: «Ռենշինի» եւ «Ամերիաբանկի» համագործակցությունը կառուցապատման եւ ֆինանսական ոլորտների կարողությունների եւ փորձի միավորմամբ արդյունավետ գործընկերության օրինակելի նախադեպ է, որը Մկարող է նոր խթան հանդիսանալ երկրի տնտեսական աճի, անշարժ գույքի շուկայի զարգացման եւ ներդրումային միջավայրի բարելավման համար՝ ամրապնդելով վստահությունը Հայաստանի տնտեսության նկատմամբ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ներդրողների շրջանում:

Skyline-ում կառուցվող 35 հարկանի 5 շենքերի բարձր սեյսմակայություն ապահովող կոնստրուկցիան եւ ինժեներիան նախագծել է ոլորտի համաշխարհային առաջատար, ամբողջ աշխարհում ինժեներական բարդ կառույցների նախագծման մեծ փորձ ունեցող անգլիական Arup ընկերությունը, իսկ Skyline-ի նախագծային աշխատանքներն իրականացնում է «քաղաք՝ քաղաքում» կոնցեպտով թաղամասերի նախագծման համաշխարհային առաջատար, նյույորքյան Laguarda Law ճարտարապետական բյուրոն:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ՆՈՐ ԷՋ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԸ

Թբիլիսիում բացվել է հայ մեծանուն քանդակագործ Երվանդ Քոչարին նվիրված հուշատախտակ:

Հայ մեծանուն քանդակագործ-արձանագործ, նկարիչ Երվանդ Քոչարի 125-ամյակի շրջանակում՝ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ Թբիլիսի քաղաքի Պուշկինի փողոցի N13 հասցեում՝ տանը, որտեղ 1899-1922 թթ. ապրել է Քոչարը, բացվել է հուշատախտակ:

Միջոցառմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Թբիլիսիի քաղաքային խորհրդի նախագահ Զուրաբ Աբաշիձեն, Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Երվանդ Քոչարի թանգարանի տնօրեն, արվեստագետի թոռնուհի Կարինե Քոչարը, ինչպես նաեւ քաղաքային խորհրդի մի շարք անդամներ:

«Թբիլիսիի վերոնշյալ հասցեն նշանակալի է թե՛ հայ եւ վրաց ժողովուրդների, թե՛ արվեստասեր հանրության համար, եւ մեծ պատիվ է հայ մեծանուն արվեստագետ եւ մտավորական Երվանդ Քոչարին նվիրված հուշատախտակի բացումը: Թբիլիսին երկար տարիներ եղել է հայկական արվեստի եւ մշակույթի զարգացման նվիրական քաղաք: Քոչարի ստեղծագործական եզակիության արմատները պետք է փնտրել երկու եղբայրական ժողովուրդների համակեցության, ինչպես նաեւ մեկը մյուսի մշակույթի նկատմամբ ունեցած սիրո եւ հարգանքի արդյունքում ձեւավորված միջավայրում:

Այս հուշատախտակը դառնում է եւս մեկ կամուրջ Երեւանի եւ Թբիլիսիի, Հայաստանի եւ Վրաստանի մշակութային երկխոսության միջեւ: Մենք այսօր վերահաստատում ենք այդ կապը մեծանուն Քոչարի անունով: Լիահույս եմ, որ այս վայրը կդառնա լուսավոր կանգառ բոլոր նրանց համար, ովքեր սիրում են արվեստը», - նշված է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի ողջույնի խոսքում, որը փոխանցում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաղորդագրությունը:

Երվանդ Քոչարի տուն-թանգարանում մինչ օրս պահպանվում են նրա հեղինակած Շոթա Ռուսթավելիի արձանը եւ արվեստագետի անձնական նամակագրությունը՝ նկարիչներ Լադո Գուդիաշվիլիի, Էլենե Ախվլեդիանիի, Դավիթ Կակաբաձեի եւ այլոց հետ:

Հուշատախտակի բացումը կայացավ ՀՀ արտաքին գործերի նախարարության, Թբիլիսիի իշխանությունների եւ Վրաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ:

Քոչարի հուշատախտակի բացումը ոչ միայն հարգանքի տուրք է մեծ արվեստագետին, այլ նաեւ կարեւոր մշակութային քայլ, որը հիշեցնում է հայկական-վրացական ընկերության ստեղծարար արմատների մասին: Նման նախաձեռնությունները շարունակում են կենդանի պահել այն մշակութային կամուրջները, որոնց վրա է կանգնած մեր համատեղ պատմական հիշողությունը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

ԹՎԱՅՆԱՑՎԵԼ Է 30 ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՎ ՍԻՄՖՈՆԻԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Թվայնացվել է հայ երաժշտության մեջ կարեւոր տեղ զբաղեցնող 30 կամերային եւ սիմֆոնիկ ստեղծագործություն: Այդ քայլը մեծ նշանակություն ունի հայ մշակութային ժառանգության պահպանման գործում, քանի որ ներկայացված ստեղծագործությունները առանցքային դեր ունեն եւ սիրված են ունկնդրի շրջանում:

Նախաձեռնությունն իրականացրել են Armenian National Music-ը եւ hosq-ը:

Ստեղծագործություններն ընտրվել են այն սկզբունքով, որ շատ պահանջված են կատարողների կողմից: Հիմնական շեշտը դրվել է Ավետ Տերտերյանի երրորդ սիմֆոնիայի թվայնացման վրա, քանի որ այդ ստեղծագործությունը հանդիսացել է «Նոթեյշնս» լաբորատորիայի հիմնաքարը, եւ հենց այդ ստեղծագործության շուրջ կառուցվել է հսկայական փառատոն, որը մեծ հաջողություն է ունեցել թե՛ լսարանի, թե՛ լաբորատորիայի մասնակիցների համար:

Կատարվել է նաեւ մեկ այլ ստեղծագործության պրոֆեսիոնալ տեսաձայնագրում:

Նախաձեռնության հեղինակները նշում են, որ այդ նախաձեռնությամբ ոչ միայն պահպանում են հայկական երաժշտության կարեւորագույն էջերը, այլեւ այդ էջերը հասանելի են դարձնում սերունդներին:

ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՖԻԼՄԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԿՑՈՒՑԱԴՐՎԵՆ ՀԱՅԵՐԵՆ ԵՆԹԱԳՐԵՐՈՎ

«Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օտարալեզու ֆիլմերը Հայաստանի բոլոր կինոթատրոններում մեծ էկրանին կցուցադրվեն հայերեն ենթագրերով՝ ապահովելով ավելի լայն լսարանի ներգրավվածություն եւ հասանելիություն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից հայտնում են, որ նշված կարգավորումը վերաբերում է ոչ միայն կինոթատրոնային ցուցադրություններին, այլեւ հեռուստատեսային, առցանց (համացանցային) եւ նյութական կրիչներով տարածվող ֆիլմերին:

Նախաձեռնությունն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Հայաստանի կինոյի հիմնադրամի համատեղ ջանքերով՝ համագործակցելով օտարերկրյա դիստրիբյուտորական ընկերությունների հետ:

«Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օտարալեզու ֆիլմերի տարածումն այժմ իրականացվում է վարձութային վկայականի հիման վրա, որի պարտադիր պայմաններից մեկն է ֆիլմի հայերեն լեզվով տեսանելի եւ հստակ ենթագրումը: Հաջորդ փուլում նախատեսվում է նաեւ օտարալեզու ֆիլմերի հայերեն կրկնօրինակման իրականացում:

ԿԳՄՍ նախարարությունը եւ Հայաստանի կինոյի հիմնադրամը շարունակում են հետեւողական աշխատանքներ իրականացնել կինոոլորտում պետական քաղաքականության արդյունավետ կիրառման եւ կինոդիտման միջավայրի բարելավման ուղղությամբ՝ ապահովելով «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքով սահմանված դրույթների իրագործումը:

ՄԱՐԶԱԿԱՆ

32 ԹԻՄ ՀԱՅՏՆԻ Է

Ֆուտբոլի աշխարհի 2026 թ. առաջնությանը մասնակից 48 երկրից 32-ը հայտնի է: 2026 թ. կայանալիք Մունդիալին մասնակցելու են ԱՄՆ-ն, Կանադան, Մեքսիկան, Ճապոնիան, Պարագվայը, Մարոկկոն, Թունիսը, Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Կատարը, Հարավային Կորեան, Նոր Զելանդիան, Ավստրալիան, Իրանը, Ուզբեկստանը, Արգենտինան, Բրազիլիան, Էկվադորը, Ուրուգվայը, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Կոլումբիան, Եգիպտոսը, Ալժիրը, Գանան, Կաբո Վերդեն, Սենեգալը, Կոտ դ՛Իվուարը, Անգլիան, Ֆրանսիան, Խորվաթիան:

2026 թ. աշխարհի առաջնությանը կմասնակցի 48 ազգային թիմ, որոնք կբաժանվեն 12 խմբի՝ յուրաքանչյուրում չորս հավաքական: Աշխարհի առաջնության փլեյ-օֆֆ դուրս կգան առաջին երկու տեղը զբաղեցրած հավաքականները, ինչպես նաեւ երրորդ տեղում գտնվող ութ լավագույն թիմ: Բացի դրանից, 2026 թ. աշխարհի առաջնությանը կավելացվի նոր փուլ՝ 1/16 եզրափակիչ:

ԲԵՆԶԵՄԱՆ ԿԱԶՄԵԼ Է ԻՐ ԵՐԱԶԱՆՔԻ ԹԻՄԸ

«Ալ-Իթիհադի» 37-ամյա ֆրանսիացի հարձակվող Կարիմ Բենզեման կազմել է իր երազանքի թիմը: Խաղացողը ընտրել է 4-3-3 խաղային դասավորությունը, հայտնում է AS-ը:

Բենզեման դարպասապահի դիրքում ընտրել է Մյունխենի «Բավարիայի» դարպասապահ Մանուել Նոյերին: Պաշտպանության գծում նա ընդգրկել է «Բարսելոնայի» նախկին պաշտպան Դանի Ալվեսին, ինչպես նաեւ «Ռեալի» նախկին խաղացողներ Սերխիո Ռամոսին, Պեպեին եւ Մարսելոյին:

Կիսապաշտպանական գծում նա ընտրել է Ֆրանսիայի հավաքականում իր նախկին թիմակից Պոլ Պոգբային, Ռոնալդինյոյին եւ «սերուցքայինների» նախկին գլխավոր մարզիչ Զինեդին Զիդանին:

Հարձակման եռյակը ձեւավորել են Լիոնել Մեսսին, Կրիշտիանու Ռոնալդուն եւ Ռոնալդո Նազարիոն: Ֆրանսիացին իրեն թողել պահեստայինների թվում, Անդրես Ինիեստային եւ Լուկա Մոդրիչի հետ միասին:

ԿԱՄՊ ՆՈՈՒՆ ՉԻ ՎԵՐԱՆՎԱՆՎԻ ՄԵՍԻԻ ՊԱՏՎԻՆ

«Բարսելոնայի» փոխնախագահ Ելենա Ֆորտը մերժել է ակումբի տնային մարզադաշտը՝ «Կամպ Նոուն», թիմի նախկին լեգենդար արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսիի պատվին վերանվանելու գաղափարը:

«Կան նրա անունը հավերժացնելու բազմաթիվ այլ, նույնիսկ ավելի արդյունավետ եղանակներ», - Ֆորտի խոսքերն է մեջբերում Cadena SER-ը:

Ավելի վաղ իսպանական մամուլում շրջանառվել էր վերանորոգված «Կամպ Նոու» մարզադաշտը Լիոնել Մեսիի պատվին վերանվանելու տարբերակը: Լեոն կատալոնական ակումբի համակարգում եղել է 2000-ից 2021 թվականներին: Արգենտինացին «Բարսելոնայի» պատմության բոլոր ժամանակների լավագույն ռմբակությունն է՝ 778 խաղում խփած 672 գոլով:

● *Նոյեմբերի 23-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Բժշկասոցիալական վերափորձաքննություն անցնելու համար կոնկրետ ի՞նչ է անհրաժեշտ:

Ելենա Գրիգորյան
(57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վերափորձաքննություն անցնելու համար անհրաժեշտ է՝

ա) անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա՝ հաշմանդամության խմբի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու կամ անձի առողջական վիճակը վատթարանալու դեպքում

բ) բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ՝ փորձաքննական որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերելու կամ հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքում

գ) դատարանի որոշման կամ վճռի հիման վրա: (Հիմք՝ ՀՀ կառավարության 02.03.06թ. թիվ 276-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետ):

Կենսաթոշակային համակարգի
իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ 18 տարին լրացած անձին տրվում է հաշմանդամության 1-ին, 2-րդ կամ 3-րդ խումբ՝ ելնելով առկա հիվանդություններով, վնասվածքներով կամ արատներով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիայի կայուն խանգարումների հետեւանքով առաջացած կենսագործունեության սահմանափակման տեսակից կամ աստիճանից:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Իմ հաշիվների վրա դրված են արգելանքներ. ինչպե՞ս կատարել վճարումը եւ շուտ ազատվել դրանցից:
Համլետ Աղաջանյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկադիր ծառայությունում հարուցված կատարողական վարույթներով համապատասխան գումարների վճարումները կարող են կատարվել հետեւյալ տարբերակներով.

ՏԱՐԲԵՐԱԿ 1 - Անհրաժեշտ է մոտենալ ցանկացած վճարման (EASYPAY, TELCELL, MOBIDRAM) տերմինալի մոտ, սեղմել Հարկադիր ծառայություն պատուհանը, մուտքագրել Ձեր հեռախոսահամարը եւ սոցիալական քարտի համարը՝ ՀԾՀ-ն, որից հետո էկրանին կհայտնվեն տվյալներ Ձեր նկատմամբ հարկադիր ծառայությունում հարուցված վարույթների եւ արգելանքների մասին, ինչպես նաեւ՝ տվյալներ արգելանքների համար հիմք հանդիսացող գումարների չափերի եւ պահանջատերերի մասին: Տերմինալով կարող եք ըստ հաջորդականության կատարել բոլոր վճարումները, եւ կիրառված արգելանքները կվերանան նույն օրվա ընթացքում:

ՏԱՐԲԵՐԱԿ 2 - Անձնագրով եւ սոցիալական քարտով մոտենալ հարկադիր ծառայություն՝ ք. Երեւան, Հալաբյան 41ա հասցեով, եւ տեղում սպասարկող աշխատակիցների մոտ կատարել բոլոր վճարումները: Արգելանքները կհանվեն մեկ օրվա ընթացքում:

ՏԱՐԲԵՐԱԿ 3 - Այցելել պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կայք, լրացնել համապատասխան դաշտերը եւ կատարել վճարումը: Այս տարբերակով վճարում կատարելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան բանկային քարտ, որի վրա առկա կլինեն բավարար չափով դրամական միջոցներ: Վճարումը կատարելուց հետո արգելանքները կվերացվեն երկու օրվա ընթացքում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համապատասխան վճարումները կարող եք կատարել նաեւ ՀՀ-ում գործող ցանկացած բանկի մասնաճյուղում, «Հայ Փոստ» ՓԲԸ-ի բաժանմունքներում, եւ այս տարբերակի դեպքում պետք է Ձեզ հետ ունենաք անձնագիր, սոցիալական քարտ եւ հարկադիր կատարողի համապատասխան որոշման օրինակը, որի հիման վրա կկատարվի վճարումը: Արգելանքը վճարումից հետո կհանվի երեք օրվա ընթացքում:

Վճարումներ կատարելու ընթացքում դժվարություններ առաջանալու դեպքում կարող եք զանգահարել հարկադիր ծառայության «Քո արգելանքը» արագ արձագանքման խմբին՝ (077), (091), (055) 713-437:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ պաշտոնական լրահոսից

Երեկ հայտնի դարձավ, որ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որոշմամբ կասեցվել է անհատ ձեռնարկատիրոջը պատկանող հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը (ք. Գյումրի, Շիրակացի 17): Կասեցման պատճառ է դարձել այն, որ սննդի օբյեկտի պատերը չունեին հարթ մակերես, եղել են մրոտ, չնորոգված, որոշ հատվածներում՝ ճաքերով, ինչն անհնար էր դարձնում պատշաճ մաքրումն ու ախտահանումը: Առաստաղը նույնպես նորոգված չէր, նկատվել էին կեղտի կուտակումներ եւ մասնիկների թափվելու հնարավորություն:

Հուսանք, որ տրված ժամկետում սեփականատերը կլուծի մաքրության եւ նորոգման խնդիրները, որպեսզի սննդի կետը կարողանա վերագործարկել՝ արդեն համապատասխանելով անվտանգության նորմերին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 6 +10 + 13
Կոտայքի լեռներ	- 3 - 6 +14 + 17
Կոտայքի նախալեռներ	0 + 3 +13 + 16
Գեղարքունիք	- 3 - 7 +11 + 14
Լոռի	- 3 - 7 +15 + 19
Տավուշ	+ 2 + 6 +18 + 21
Արագածոտնի լեռներ	- 4 - 7 +10 + 13
Արագածոտնի նախալեռներ	0 + 3 +14 + 17

Արարատ	0 + 3 +14 + 17
Արմավիր	0 - 2 +16 + 19
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 +10 + 13
Վայոց ձորի նախալեռներ	0 + 3 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 5 +13 + 16
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +17 + 20
ԼՂՀ	+ 3 + 6 +16 + 19
Երեւան	+ 4 + 6 +11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.11.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*